ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 151-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 12-ը դեկտեմբերի 2023 թվականի թիվ 16 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 12.12.2023թվականի թիվ 16 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. 2024 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2024 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

4. 2024 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2024 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. 2024 թվականի ընթացքում Արենի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին վառելիք հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

8. Մոզրովի հիմնական դպրոցի հետագա գործունեության մասին:

9. Մոզրով բնակավայրի բնակիչ Գևորգ Արսենի Մուրադյանի Արփիի միջնակարգ դպրոց հաճախելիությունը ապահովելու նպատակով գումար հատկացնելու մասին:

10. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 09.11.2023թվականի թիվ 141-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին:

12. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

13. «Թուֆենկյան Հոսպիթալիթի» ՍՊ ընկերության տնօրենի գրությունը քննարկելու մասին:

14. 18-ը հունվարի 2023 թվականի «Արենի համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին:

15. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:

16. Արենի համայնքի 2024-26թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին:

17. Արենի համայնքի ավագանու 16.11.2018թվականի թիվ 108 և թիվ 109 որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

18. Արենի համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողների կողմից վճարած ծնողական վճարներից հետ վերադարձնելու մասին:

19. Արենի համայնքի ավագանու 20.09.2022թվականի թիվ 101-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Արենի համայնքի Արենի բնակավայրի կենտրոնական հրապարակը անվանակոչելու մասին:

20. Ամանորին ընդառաջ համայնքում բնակվող բոլոր տնային տնտեսություններին նվերներ հատկացնելու մասին:

21. Արենի համայնքի ավագանու 2024 թվականի գարնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՆԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**